

Խմբագրութիւնս հեռագրով լիազօրութիւն տուեց իւր աշխատակից պ. Ստեփան Գաբրիէլեանին մասնակցել Պետեր-րուրդում ոռուսական մամուլի աշխատակիցների համաժողովին:

Կիւրակի, ամսոյս Յ. ին Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում Հայոց նախկին հրատարակչական ընկերութեան նախագահի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ մի խումբ գրագէտների ժողով, խորհրդակցելու թէ ինչպէս կարելի է վերաբանալ այդ ընկերութիւնը առաւել լայն հիմունքների վերայ և ժամանակիս համապատասխան ծրագրով: Ժողովը միաձայն ընդունեց հրատարակչական ընկերութեան կարևորութիւնը և նշանակելով մի մասնաժողով՝ յանձնեց նորան կազմել մի նոր կանոնադրութիւն, ի նկատի ունենալով թէ ինը և թէ ներկայ ժամանակի պահանջները և Զատկից յետոյ ներկայացնել ժողովի քննութեան, որից յետոյ կառաջարկուի ի հաստատութիւն ուր որ հարկն է:

Քանի որ ժողովի նախաձեռնողը նախկին հրատարակչական ընկերութեան վարչութիւնն էր, մնաք սպասում էինք, որ այդ վարչութիւնը նախ քան ընկերութեան վերաբացման խնդիր առաջարկելը, պարտք կհամարէր ներկայացնել ժողովին ընկերութեան վերջնական հաշիւը, որ ընկերութեան փակման ժամանակ զլացել էր նա տալ անդամներին և մինչև այսօր մութմաց այն խնդիրը, թէ իրօք այնքան դոյք յանձնուեցաւ Երեւանի Հայ թեմական դպրոցին, որքան որ ըստ հաշուի հասնելու էր, թէ աւելի կամ պակաս: Մենք դարձեալ կապասենք:

Մեծ. տ. Եղիսաբէդ Յարութիւնեանը ի յիշատակ իւր հանգ. դատեր օր. Մարիամ Յարութիւնեանի ուղարկել է խըմբագրութեանս 10 ոռուբի, որից հինգ ո. Բագուի արկածեալների և հինգ ո. Զխարի հրկիզելոց օգտին: Խմբագրութիւնս առաջին 5 ո. ուղարկեց Թիֆլիսի պ. Քաղաքագլուխին և վերջինը թեմիս ո. Առաջնորդին:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Սրանից մի տարի առաջ մեր քաղաքում մի օրիորդի նախաձեռնութեամբ կազմակերպուել էր վերին աստիճանի համակրելի և հանրօգուտ մի գործ, – ժողովրդի ազգատ և հասարակ դասի համար պարբերաբար տալիս էր հանրամատչելի:

էժանացրած մուտքով ներկայացումներ։ Թէ որքան նա ծառայում էր իւր նպատակին և հետաքրքրում ժողովրդին, դորան ապացոյց էր այն հանգամանքը, որ ներկայացման դահլիճում, նոյն իսկ կանգնելու տեղ անդամ դժուար էր լինում ճարել եւ այդ գործը, որ իւր սկսելու օրերումն այնքան դժուար էր թըւում և անիրազործելի մի բան, մի երկու ներկայացումից յետոյ արգէն տուեց յաջողութեան և գործի յարատևութեան շօշափելի գրաւականներ։

Բայց այդ գեղեցիկ գործը սահմանափակուեց միայն մի քանի ներկայացումներով և այս տարի իսպատ չեղաւ, որովհետև գործը ստեղծող, նրա նախաձեռնող ու գելավար օրիորդը գնաց ուսումն շարունակելու, իսկ նրան փոխարինող չեղաւ։ Արդեօք այդպէս չէ, որ մեղանում հասարակական գործերից շատերը առաջ են գալիս, կեանը են ստանում անհատական ուժերի քրտնաշան աշխատանքների, նրանց աննկուն կամքի շնորհիւ։ Հքացաւ ասպարիզից այդ մարդը, այդ կորովի ուժը և գործը կանգ է առնում, մեռնում է, շարունակող չկայ. գործը ընդհանրութեան սեպհականութիւն չի ճանաչւում։ Այս, մեր շրջապատը այդ կողմից ամայի է և անհամբոյր. մեր կիանքը մեզ չի տալիս մեր հասարակական գործերում ընդհանուր ուժերով գործելու և դրականսապէս հետաքրքրուողների մեծ բազմութիւն։ Թողնելով անհատների ուսերի վրայ հասարակական գործի ամբողջ ծանրութիւնը, որտեղ նրանցից պահանջւում է չափազանց մեծ զոհողութիւններ նիւթական, բարոյական ու ֆիզիքական ուժերի. չափազանց լարումն, բնականաբար շատ կարճ ժամանակում սպառուում են—և ասպարէզը մնում է դատարկ, մինչև որ ժամանակը կծնի մի նոր անձնազոհ անհատ։

Մեր կիանքի այդ՝ բնական օրէնքների շարքն անցած յատկութեան շնորհիւ, այսօր մեղանում կանգ է առել ժողովրդական էժանագին ներկայացումներ տալու համակրելի գործը և վերսկսելու, շարունակելու միտքը, նախաձեռնող օրիորդի ընկերների և ընկերուհիների մտքով անգամ չի անցնում։

ԴԻՑՈՂ